Թարգմանություն վրացերենից

Վրաստանի զինանշան

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

**Ք.ԹԲԻԼԻՍԻ**

**14.02.2024թ.** **MES 6 24 0000160332**

**Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի «Ընդհանուր Բժշկություն» հայալեզու միաստիճան կրթական ծրագրի հավատարմագրման մասին**

1. Որոշումների ընդունման իրավական հիմքերը

1.1. «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքի 66-րդ հոդվածի առաջին կետի, «Կրթության որակի զարգացման մասին» Վրաստանի օրենքի 5-րդ հոդվածի 1-ին հոդվածի «բ²» ենթակետի, 22-րդ հոդվածի 1-ին կետի և Վրաստանի կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մայիսի 4-ի No.65/ն հրամանով հաստատված "Բարձրագույն կրթական հաստատությունների կրթական ծրագրերի հավատարմագրման դրույթի» (այսուհետ՝ Հավատարմագրման դրույթ) 27²-րդ հոդվածի առաջին կետի, ինչպես նաև, 31²-րդ հոդվածի համաձայն, կրթական ծրագրերի հավատարմագրման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) հավատարմագրման փաստաթղթերի, հավատարմագրման փորձագիտական խմբի եզրակացության՝ հաստատության կողմից հավատարմագրման փորձագիտական խմբի եզրակացության նախագծի վերաբերյալ ներկայացված փաստարկված դիրքորոշման ուսումնասիրման և բանավոր լսումների անցկացման հիման վրա, որոշում է կայացնում կրթական հաստատության կրթական ծրագրի հավատարմագրման վերաբերյալ: Հավատարմագրման դրույթի 27⁵-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն Խորհուրդը պարտավոր է հիմնավորել իր կողմից ընդունված որոշումը:

1.2. «Կրթության որակի զարգացման մասին» Վրաստանի օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի և Հավատարմագրման դրույթի 27⁵-րդ հոդվածի առաջին կետի «ա» ենթակետի համաձայն, Խորհուրդը որոշում է կայացնում կրթական ծրագրին հավատարմագրում շնորհելու վերաբերյալ, եթե «Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ կետի, «Կրթության որակի զարգացման վերաբերյալ» Վրաստանի օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ կետի և Հավատարմագրման դրույթի 27⁶-րդ հոդվածի առաջին կետի «ա» ենթակետի համաձայն, Կրթական ծրագրերի առաջին և յուրաքանչյուր հաջորդ հավատարմագրման դեպքում, Կրթական ծրագիրը հավատարմագրման չափորոշիչների հետ համապատասխանությունը գնահատելիս, բոլոր չափորոշիչների նկատմամբ Խորհրդի կողմից գնահատվել է, որպես «լիովին կամ/և մեծապես համապատասխանող չափորոշիչների պահանջներին»:

1.3. Հավատարմագրման դրույթի 27⁵-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Կրթական ծրագրերին հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, Խորհուրդն իրավասու է հավատարմագրում հայցողին տալ առաջարկություններ:

1.4. Համաձայն հավատարմագրման դրույթի 27⁶-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի, եթե առնվազն մեկ ս չափորոշիչի առնչությամբ այն գնահատվել է որպես «մեծապես համապատասխանող չափանիշի պահանջներին» և որևէ չափորոշիչի առնչությամբ չի գնահատվում, որպես «մասամբ համապատասխանում է չափորոշիչի պահանջներին կամ «չի համապատասխանում չափորոշիչի պահանջներին», ապա Խորհուրդը որոշում է կայացնում հավատարմագրման մասին և ստացված առաջարկությունների

կատարման վերաբերյալ հաստատությանը ժամկետ է սահմանում հաշվետվությունը ներկայացնելու, որն արտացոլվում է Խորհրդի նիստի արձանագրության մեջ:

1.5. Համաձայն հավատարմագրման դրույթի $27^{6}$-րդ հոդվածի առաջին կետի «բ¹» ենթակետի, եթե կրթական ծրագիրն առաջին (կրթական ծրագրի նպատակը, ուսուցման արդյունքները և ծրագրի համապատասխանությունը դրանց հետ) կամ 4-րդ (ուսուցման ռեսուրսներով ապահովությունը) չափորոշիչների հետ կապված գնահատվել է որպես «մեծապես համապատասխանում է չափորոշիչի պահանջներին» և ոչ մի չափորոշիչի հետ կապված չի գնահատվում որպես «մասամբ համապատասխանում է չափորոշիչի պահանջներին կամ «չի համապատասխանում չափորոշիչի պահանջներին», և չափորոշիչի «մեծապես համապատասխանությունը» պայմանավորված է նույն չափորոշիչի ոչ ավելի, քան մեկ բաղադրիչի գնահատմամբ, որպես «մասամբ համապատասխանում է չափորոշիչի պահանջներին», ապա Խորհուրդը որոշում է կայացնում հավատարմագրման մասին և սույն դրույթով սահմանված կարգով դիմում է կենտրոնին հաստատությունում մշտադիտարկում իրականացնելու մասին (ոչ ավել 2 տարվա ընթացքում), որն արտացոլված է Խորհրդի նիստի արձանագրության մեջ:

**2. Նկարագրական մաս և հիմնավորում**

2.1. ՀԻԻԱ՝ Կրթության որակի զարգացման ազգային կենտրոն (այսուհետ՝ Կենտրոն) 2023թ. հունիսի 15-ի թիվ 02,01/675 գրությամբ (Կենտրոնում գրանցման համարը՝ 739785, 21.06.2023թ.) է ներկայացված Մխիթար Հերացու անվան Երնանի պետական բժշկական համալսարանի հավատարմագրման հայտ՝ «Ընդհանուր բժշկություն» հայալեզու միաստիճան կրթական ծրագրի վերաբերյալ: Կենտրոնի 2023 թ. հունիսի 26-ի թիվ 761959 գրությամբ, հաստատությանը արձանագրվել է բացթողում: 2023 թ. հուլիսի 10-ի թիվ 857929 և թիվ 858101 նամակներով կենտրոն մուտք է գործել բացթողումը շտկելու գրություն:

2.2. Կենտրոնի 2023 թվականի հուլիսի 31-ի թիվ 949550 հրամանի հիման վրա Մխիթար Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարանը ճանաչվել է հավատարմագրում հայցող: Կենտրոնի 2023 թվականի հոկտեմբերի 02-ի թիվ 1273715 հրամանի հիման վրա ստեղծվել է փորձագետների խումբ, որի այցը հաստատություն իրականացվել է 2023 թվականի հոկտեմբերի 16-20-ին՝ «Ընդհանուր բժշկության» հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով միաստիճան կրթական ծրագրերի գնահատման նպատակով:

Փորձագիտական խմբի ներկայացրած եզրակացության համաձայն՝ հավատարմագրմանը ներկայացրած «Ընդհանուր բժշկություն» հայալեզու միաստիճան կրթական ծրագիրը գնահատվել է հետևյալ կերպ.

| Չափորոշիչներ | Համապատասխանում է պահանջներին | Մեծապես համապատասխանում է պահանջներին | Մասամբ համապատասխանում է պահանջներին | Չի համապատասխանում պահանջներին |
|---|---|---|---|---|
| 1.Կրթական ծրագրի նպատակը, ուսուցման արդյունքները և ծրագրի համապատասխանությունը դրանց հետ | | x | | |
| 2.Ուսուցման մեթոդաբանությունը և կազմակերպումը, ծրագրի յուրացման գնահատման նույնականությունը | | x | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.Ուսանողների նվաճումները, նրանց հետ անհատական աշխատանքը | x | | | |
| 4.Ուսուցման ռեսուրսներով ապահովությունը | x | | | |
| 5.Ուսուցման որակի զարգացման հնարավորությունները | x | | | |

2.3. Խորհուրդն ուսումնասիրել է կրթական ծրագրերի հավատարմագրման հետ կապված փաստաթղթերը, մասնավորապես, ինքնագնահատման հաշվետվություն և դրան կից փաստաթղթերում տրված տեղեկատվությունը, փորձագիտական խմբի եզրակացությունը, փորձագիտական խմբի եզրակացության նախագծի նկատմամբ հավատարմագրում հայցողի կողմից Կենտրոնին ներկայացված փաստարկային դիրքորոշումը: Բանավոր լսումները տեղի են ունեցել 2024 թվականի փետրվարի 06-ին:
2.4 Հավատարմագրման հայցի, հավատարմագրման փորձագիտական խմբի եզրակացության և փորձագետների խմբի եզրակացության նախագծի նկատմամբ հավատարմագրում հայցողի կողմից Կենտրոնին ներկայացված փաստարկային դիրքորոշման, ինչպես նաև նիստում շահագրգիռ կողմի բանավոր դիրքորոշման լսումների հիման վրա Խորհուրդն ամբողջությամբ կիսել է փորձագետների եզրակացությունում արձանագրված գնահատումը:

**3. Բանաձևային մաս**

«Բարձրագույն կրթության մասին» Վրաստանի օրենքի 66-րդ հոդվածի 1-ին կետի, 2-րդ կետի «ա» ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի, «Կրթության որակի զարգացման մասին» Վրաստանի օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի, 2-րդ կետի «ա» ենթակետի, 3-րդ և 8-րդ կետերի, հավատարմագրման դրույթի $31^2$ հոդվածի առաջին կետի, $27^2$ հոդվածի առաջին կետի, $27^5$ հոդվածի առաջին կետի «ա» ենթակետի, 2-րդ և 5-րդ կետերի, $27^6$ հոդվածի առաջին կետի «$բ^1$» ենթակետի, «Հանրային Իրավունքի Իրավաբանական անձ՝ «Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի գործավարության կարգը և Կանոնակարգը հաստատելու մասին» ՀԻԻԱ՝ Կրթության որակի զարգացման ազգային կենտրոնի տնօրենի 2011 թվականի հունիսի 01-ի թիվ 223 հրամանի 8-րդ հոդվածի և Վրաստանի Ընդհանուր վարչական օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ հավատարմագրման Խորհուրդը 31 կողմ և ոչ մի դեմ ձայնով՝

ՈՐՈՇԵՑ

1. Բավարարել Միխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական Համալսարանի կողմից ներկայացված հավատարմագրման հայտը և հավելված թիվ 1-ով նախատեսված «Ընդհանուր բժշկության» հայալեզու միաստիճան կրթական ծրագրին շնորհել հավատարմագրում 7 տարի ժամկետով՝ 2 տարի ժամկետում մշտադիտարկում իրականացնելու պայմանով;
2. «Ընդհանուր բժշկություն» հայալեզու միաստիճան կրթական ծրագրի մասին Հավատարմագրման փորձագիտական խմբի եզրակացությունը հայտարարել սույն որոշման անբաժանելի մաս (հավելված N 2):
3. Խորհրդի 2024 թվականի փետրվարի 14-ի թիվ 160329 նիստի արձանագրության թիվ 01 մասը ճանաչել սույն որոշման անբաժանելի մաս (հավելված N 3):

4. Խորհուրդը սահմանել է հաստատության իրականացմանը ենթակա հետևյալ առաջարկությունները և խորհուրդները՝

**Առաջարկություններ**

1. Խորհուրդ է տրվում, որ ծրագրի նպատակները հասանելի լինեն հանրությանը, օրինակ հաստատության կայքի կամ այլ հարթակների միջոցով, որպեսզի բարելավել թափանցիկությունը և շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը:
2. Խորհուրդ է տրվում կլինիկական պայմաններում ավելի լավ վերահսկվեն և ավելի լավ նկարագրվեն գործնական հմտությունների գնահատման չափորոշիչները, քանի որ հմտությունների գնահատման մասը (ընդհանուր առմամբ կլինիկական դասընթացներում) ցածր է:
3. Պետք է ապահովվի ծրագրի առանձին փուլերի միջև (օրինակ՝ նախակլինիկական և կլինիկական մասերի միջև) կապի մշտադիտարկումը, որպեսզի նպաստել ուսուցման և ուսման սահուն գործընթացին և ապահովել ներդաշնակությունը պլանների և իրականության միջև:
4. Պետք է վերանայվի ու փոխվի ծրագրի մոդուլային կառուցվածքը, մշակվի ինտեգրման մակարդակները (հորիզոնական, ուղղահայաց և պարուրաձև բաղադրիչները), համապարփակ, համաձայնեցված կրթական ռազմավարության հիման վրա:
5. Պետք է վերանայվի մոդուլների կառուցվածքը (առարկաների կապվածությունը, թեմաների և առարկաների միջև կապը, նախադրյալները):
6. Համալսարանը պետք է մշակի գործողությունների ծրագիր՝ մանրամասն նկարագրելով ակտիվությունները, պարտավորությունները, ժամկետները և սպասվող փոփոխությունների բնույթը:
7. Պետք է վերանայվի և զարգացվի ուսումնական պլանի քարտեզը և ուսումնական պլանի հորիզոնական, ուղղահայաց և պարուրաձև տարրերի միջև կապը:
8. Առաջարկվում է պարտադիր և ընտրովի առարկաների հավասարակշռված բաշխում յուրաքանչյուր ուսումնական տարվա/կիսամյակի ընթացքում: Խորհուրդ է տրվում նաև ավելի քան 20 ընտրովի դասընթացների առաջարկում, ինչպես դա մատնանշված է ԵՊԲՀ դիպլոմավորված բժշկի կրթական ծրագրում:
9. Խորհուրդ է տրվում, որ ծրագիրը վերանայվի և ուսումնական ծրագրում հստակ սահմանվի և ընդգրկվի հմտությունների/հետազոտական կարողությունների ցանկը:
10. Առաջարկվում է, որ համալսարանը մշակի և ներդնի ավելի մանրամասն չափանիշներ և բաժիններ՝ միավորներ շնորհելու համար:

**Խորհուրդներ**

1. Կանոնավոր սեմինարները կամ հետադարձ կապի նիստերը ցանկալի է որ ապահովվեն, որպեսզի բոլոր շահագրգիռ կողմերը՝ ֆակուլտետից մինչև ուսանողներ, համապատասխան լինեն ծրագրի նպատակներին:
2. Հաշվի առնելով բժշկական ոլորտի դինամիկ բնույթը՝ ցանկալի է պարբերաբար վերանայել և թարմացնել ծրագրի նպատակները՝ դրանց արդիականությունը մշտական ապահովելու համար:
3. Ցանկալի է, որ ծրագրի մշակման մեջ ներգրավված բոլոր գործատուներն ամբողջությամբ ծանոթ լինեն ծրագրի ուսումնառության արդյունքներին:
4. Ցանկալի է վերանայել զարգացումը գնահատող ցուցակը և վերանայել, արդյո՞ք այլ տերմինը կարող է ավելի ճիշտ ապահովել նկարագրումը:
5. Ցանկալի է վերանայել հաստատության կողմից սահմանված տվյալների պաշտպանության քաղաքականությունը՝ ապահովելու անձնական տվյալների պաշտպանության խնդիրները:

6. Ցանկալի է խրախուսել համագործակցությունը տարբեր նախակլինիկական բաժանմունքների և կլինիկական դիսցիպլինների ֆակուլտետների միջև՝ միասին աշխատելու այդպիսի կառուցվածք ստեղծելու համար, որը ներառում է նախակլինիկական դասընթացների տարրեր և կլինիկական բժշկության առարկաներ:
7. Ծրագրի կառուցվածքը ցանկալի է դարձնել ավելի հասկանալի և հեշտ իրականացվող, եթե այն ներկայացված լինի այնպիսի դիագրամով (օրգանոգրամով), որը ցուցադրում է վարչական, ակադեմիական և կլինիկական միավորները, բաժանմունքները, բաժինները, կից ուսումնական հիվանդանոցները: Դրա ցուցադրումը հնարավոր է նաև ԲՈՒՀ-ի կայքում:
8. Որոշ դեպքերում դասընթացների անգլերեն անվանումներն ավելի քիչ են պարզ, օրինակ՝ մասնավոր վիրաբուժությունը (Private Surgery) կարող է լինել «Ընդհանուր վիրաբուժություն» (General Surgery) և տեղագրական անատոմիա և օպերատիվ վիրաբուժություն (Topographical Anatomy and Operative Surgery) կարող է լինել «Վիրաբուժական անատոմիա և տեխնիկա» (“Surgical Anatomy and Techniques”):
9. Ցանկալի է կատարելագործել մոդուլի սահմանումը:
10. Ցանկալի է վերանայել ուսումնական ժամերի բաշխումը:
11. Ցանկալի է դասավանդման ժամանակակից մեթոդների ավելի լայն կիրառում□ խրախուսեք ակտիվ ուսուցման մեթոդները, ինչպիսիք են խնդիրների լուծումը, դեպքի վրա հիմնված ուսուցումը և խմբային նախագծերը:
12. Էլեկտրոնային ուսուցման մոտեցումները կարող են ավելի լայնորեն կիրառվել դիդակտիկ հայեցակարգը բարելավելու համար:
13. Ցանկալի է ուսանողների համար ուժեղացնել գիտահետազոտական աշխատանքը՝ հիմնվելով ուսումնական պլանի վրա, օրինակ, ընտրովի դասընթացներ ուսանողների համար, ովքեր մասնակցում են ուսանողական գիտական խմբակներում, բաժանմունքներում/կլինիկաներում:
14. Բոլոր առարկաների համար ցանկալի է ներդնել գնահատման բազմաբաղադրիչ համակարգ:
15. Ցանկալի է շարունակել ERASMUS+ ծրագրին ձգտումը և հիմնել երկկողմ համագործակցություն տարբեր բուհերի հետ, որպեսզի մեծացնել հնարավորությունների շրջանակը այն ուսանողների համար, ովքեր ցանկանում են մասնակցել միջազգային ծրագրերին:
16. Ուսուցման առումով, առկա աշխատանքային ծանրաբեռնվածությանը զուգահեռ, ցանկալի է ներդնել նաև գիտական և այլ գործունեության տարեկան նորմեր:
17. Ցանկալի է ավելացնել ռեսուրսները հիմնական առարկաների բաժինների և մոդելավորման կենտրոնի/ԵԱՀԿ քննության համար:
18. Ցանկալի է բարելավել շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը և ներդրումներ կատարել այն նախաձեռնություններում, որոնք ուղղված են բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածության և տեղեկացվածության, հատկապես արտաքին շահագրգիռ կողմերի, ինչպիսիք են գործատուները:
19. Ցանկալի է պարզեցնել, ռացիոնալացնել և առաջնահերթություն տալ գնահատման արդյունքներին՝ մշակելով գնահատման արդյունքները համախմբելու ռազմավարություններ և հիմնվելով դրանց ռազմավարական ազդեցության ներուժի վրա՝ առաջնահերթությունների շնորհմամբ:
20. Ցանկալի է, որ հաստատությունը ուսումնասիրի տեխնոլոգիական ձեռքբերումների օգտագործման հնարավորությունները գնահատման գործընթացների օպտիմալացման մեջ: Սա կարող է ներառել առաջադեմ վերլուծական գործիքների օգտագործումը գնահատման արդյունքները վերլուծելու՝ բարելավման համար:

21. Թեև ծրագրի գնահատման գործընթացին արդեն մասնակցում են բազմաթիվ շահագրգիռ կողմեր, նախընտրելի է ավելի կառուցվածքային ֆորումների և նախագծերի իրականացում, որտեղ նշված շահագրգիռ կողմերը ներկայացնում են իրենց կարծիքը: Ի աջակցություն նշվածին, կանոնավոր ռեժիմով պետք է կազմակերպվեն կլոր սեղանի քննարկումներ ու աշխատանքային հանդիպումներ:

5. Խորհրդի հիշյալ որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի փետրվարի 14-ից:

6. Մշտադիտարկման իրականացման ժամկետ պետք է սահմանել 2 տարի՝ 2026 թվականի փետրվարի 14-ը:

7. Խորհրդի կողմից ընդունված որոշումը՝ Վրաստանի ընդհանուր վարչական օրենսգրքի 180-րդ հոդվածի առաջին մասի և «Կրթության որակի զարգացման մասին» Վրաստանի օրենքի $24^1$-րդ հոդվածի 1-ին կետի, հավատարմագրման դրույթի $31^2$ հոդվածի 13-րդ կետի համաձայն, կրթական հաստատության կողմից կարող է բողոքարկվել՝ վերաքննիչ բողոքը վերաքննիչ խորհուրդ ներկայացնելով հետևյալ հասցեով՝ ք. Թբիլիսի, Մ. Ալեքսիձեի 2-րդ նրբանցք, թիվ 2, կամ հայցադիմում ներկայացնելով Թբիլիսիի քաղաքային դատարանի վարչական գործերի կոլեգիայում հետևյալ հասցեով՝ ք. Թբիլիսի, Դավիթ Աղմաշենեբելիի ծառուղի h.64, հիշյալ որոշման և դրա հիմնավորման հիմքերի մասերը (հավելված թիվ 1, հավելված թիվ 2, հավելված թիվ 3) Կենտրոնի կայքում (www.eqe.ge) հրապարակման օրվանից՝ մեկամսյա ժամկետում:

Բարձրագույն կրթական ծրագրերի
Հավատարմագրման Խորհուրդ
Խորհրդի քարտուղար /ստորագրություն/ Ռատի Ռատիանի
Կրթական ծրագրերի հավատարմագրման խորհուրդ
Խորհրդի նախագահ /ստորագրություն/ Գոդերձի Բուչաշվիլի
Դրված է էլեկտրոնային ստորագրություն և դրոշմակնիք

Հավելված 1

| No. | Տեղեկատվություն կրթական ծրագրի մասին | |
|---|---|---|
| 1 | Կրթական ծրագրի անվանումը | Ընդհանուր բժշկություն |
| 2 | Միասնական բարձրագույն կրթական ծրագիր | - |
| 3 | Կարգավիճակ | Ինստիտուցիալ հավատարմագրում |
| 4 | Կարգավիճակի նախատեսմամբ, խորհրդ/ներ/ի որոշման ամսաթիվը և համարը | No.36, 24.12.2020թ. |
| 5 | Նոր հավատարմագրման դեպքում կրթական ծրագրի նախորդ անվանումը | |
| 6 | Բարձրագույն կրթության աստիճանը | Երկրորդ աստիճան Միաստիճանային |
| 7 | Թույլատրման նախապայմանները | - |
| 8 | Որակավորման մակարդակը | 7-րդ |
| 9 | Որակավորման անվանումը | «Դիպլոմավորված բժիշկ» (MD Physician, Հայաստանի Հանրապետություն)՝ «Դիպլոմավորված բժիշկ» (Medical Doctor, Վրաստան) |
| 10 | Ընդհանուր կրթության համապատասխան աստիճանի առարկայի/առարկաների/առարկայական խմբի ուսուցման իրավունքի նշումով | - |
| 11 | Մանրամասն ոլորտի անվանումը և ծածկագիրը (ISCED-F-2013) | Բժշկություն 0912 |
| 12 | Ուսուցման լեզու | Հայերեն |
| 13 | ECTS կրեդիտային ընդհանուր քանակը | 360 |
| 14 | Իրականացման վայրը | Երևան, Կորյունի 2, ՀՀ 0025 |
| 15 | Կրթական ծրագրին դատապարտյալ դիմորդների ուսումը- ուսման իրավասությունը | |
| 16 | Որոշման ուժի մեջ մտնելու ամսաթիվը | 2024 թ-ի փետրվարի 14 |
| 17 | Հավատարմագրման խորհրդի կողմից տրված առաջարկությունների կատարման մասին հաշետվություն ներկայացնելու/մշտադիտարկելու համար սահմանված ժամկետը | 2026 թ-ի փետրվարի 14 |
| 18 | Հավատարմագրման ժամկետը լրանալու ամսաթիվը | 2031 թ-ի փետրվարի 14 |

Թարգմանությունը կատարված է ճիշտ, լրիվ և իմ կողմից:

Թարգմանեց Նելլի Թոոյանը:

**Նոտարական ակտի կոդ:** 545-20240401-67-7823042
**Նոտարական ակտի գաղտնագիր:** DN0PZ8

Երկու հազար քսանչորս թվականի ապրիլի մեկ

Ես, ՀՀ Երևան նոտարական տարածքի նոտար՝ ԱՏՈՄ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆՍ, վավերացնում եմ տվյալ տեքստի վրացերեն լեզվից հայերեն լեզվով թարգմանչի ստորագրության իսկությունը:
<Նոտարիատի մասին> ՀՀ օրենքի 68 հոդվածի համաձայն հաստատում եմ փաստաթղթի թարգմանությունը կատարած թարգմանչի ստորագրության իսկությունը, այլ ոչ թե դրանում շարադրված փաստերը:

Գրանցված է գրանցամատյանում թիվ 8301

Գանձված է պետական տուրք հինգ հարյուր ՀՀ դրամ և ծառայության վճար հինգ հարյուր ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ատոմ Գրիգորիի Հայրապետյան

**საგანმანათლებლო პროგრამების აკრედიტაციის**
**საბჭოს გადაწყვეტილება**
**ქ. თბილისი**

14/02/2024

MES 6 24 0000160332

**მხითარ ჰერაცის სახელობის ერევნის სახელმწიფო სამედიცინო უნივერსიტეტის "ზოგადი მედიცინის" სომხურენოვანი ერთსაფეხურიანი საგანმანათლებლო პროგრამის აკრედიტაციის შესახებ**

**1. გადაწყვეტილების მიღების სამართლებრივი საფუძვლები**

1.1. „უმაღლესი განათლების შესახებ" საქართველოს კანონის 66-ე მუხლის პირველი პუნქტის, „განათლების ხარისხის განვითარების შესახებ" საქართველოს კანონის მე-5 მუხლის პირველი პუნქტის „ბ$^{2}$" ქვეპუნქტის, 22-ე მუხლის პირველი პუნქტისა და საქართველოს განათლებისა და მეცნიერების მინისტრის 2011 წლის 4 მაისის №65/ნ ბრძანებით დამტკიცებული "უმაღლესი საგანმანათლებლო დაწესებულებების საგანმანათლებლო პროგრამების აკრედიტაციის დებულების" (შემდგომში - აკრედიტაციის დებულება) $27^{2}$ - ე მუხლის პირველი პუნქტის, ასევე, $31^{2}$ მუხლის მიხედვით, საგანმანათლებლო პროგრამების აკრედიტაციის საბჭო (შემდგომში - საბჭო) სააკრედიტაციო დოკუმენტაციის, აკრედიტაციის ექსპერტთა ჯგუფის დასკვნის, დაწესებულების მიერ აკრედიტაციის ექსპერტთა ჯგუფის დასკვნის პროექტზე წარმოდგენილი არგუმენტირებული პოზიციის შესწავლისა და ზეპირი მოსმენის გამართვის საფუძველზე იღებს გადაწყვეტილებას საგანმანათლებლო დაწესებულების საგანმანათლებლო პროგრამის აკრედიტაციის თაობაზე. აკრედიტაციის დებულების $27^{5}$ - ე მუხლის მე-5 პუნქტის თანახმად, საბჭო ვალდებულია დაასაბუთოს მის მიერ მიღებული გადაწყვეტილება.

1.2. „განათლების ხარისხის განვითარების შესახებ" საქართველოს კანონის 22-ე მუხლის მე-2 პუნქტის „ა" ქვეპუნქტისა და აკრედიტაციის დებულების $27^{5}$ მუხლის პირველი პუნქტის „ა" ქვეპუნქტის შესაბამისად, საბჭო იღებს გადაწყვეტილებას საგანმანათლებლო პროგრამისთვის აკრედიტაციის მინიჭების შესახებ, თუ "უმაღლესი განათლების შესახებ" საქართველოს კანონის 66-ე მუხლის მე-4 პუნქტის, „განათლების ხარისხის განვითარების შესახებ" საქართველოს კანონის 22-ე მუხლის მე-8 პუნქტისა და აკრედიტაციის დებულების $27^{6}$ მუხლის პირველი პუნქტის „ა" ქვეპუნქტის შესაბამისად, საგანმანათლებლო პროგრამის პირველი და ყოველი მომდევნო აკრედიტაციის შემთხვევაში, საგანმანათლებლო პროგრამა აკრედიტაციის სტანდარტებთან შესაბამისობის შეფასებისას, ყველა სტანდარტთან მიმართებით საბჭოს მიერ შეფასდა, როგორც „სრულად ან/და მეტწილად შესაბამისობაშია სტანდარტის მოთხოვნებთან".

1.3. აკრედიტაციის დებულების $27^5$-ე მუხლის მე-3 პუნქტის შესაბამისად, საგანმანათლებლო პროგრამისთვის აკრედიტაციის მინიჭების შესახებ გადაწყვეტილების მიღების შემთხვევაში, საბჭო უფლებამოსილია აკრედიტაციის მაძიებელს მისცეს რეკომენდაციები.

1.4. აკრედიტაციის დებულების $27^6$-ე მუხლის პირველი პუნქტის „ბ" ქვეპუნქტის თანახმად, ერთ სტანდარტთან მიმართებით მაინც შეფასდა, როგორც „მეტწილად შესაბამისობაშია სტანდარტის მოთხოვნებთან" და არცერთ სტანდარტთან მიმართებით არ შეფასდება, როგორც „ნაწილობრივ შესაბამისობაშია სტანდარტის მოთხოვნებთან ან „არ არის შესაბამისობაში სტანდარტის მოთხოვნებთან", საბჭო იღებს გადაწყვეტილებას აკრედიტაციის შესახებ და დაწესებულებას განუსაზღვრავს ვადას მიღებული რეკომენდაციების შესრულების თაობაზე ანგარიშის წარსადგენად, რაც აისახება საბჭოს სხდომის ოქმში.

1.5. აკრედიტაციის დებულების $27^6$-ე მუხლის პირველი პუნქტის „$ბ^1$" ქვეპუნქტის მიხედვით თუ საგანმანათლებლო პროგრამა პირველ (საგანმანათლებლო პროგრამის მიზანი, სწავლის შედეგები და მათთან პროგრამის შესაბამისობა) ან მე - 4 (სწავლების რესურსებით უზრუნველყოფა) სტანდარტებთან მიმართებით შეფასდა, როგორც „მეტწილად შესაბამისობაშია სტანდარტის მოთხოვნებთან" და არცერთ სტანდარტთან მიმართებით არ შეფასდება, როგორც „ნაწილობრივ
შესაბამისობაშია სტანდარტის მოთხოვნებთან", ან „არ არის შესაბამისობაში სტანდარტის მოთხოვნებთან" და სტანდარტის "მეტწილად შესაბამისობა" განპირობებულია ამავე სტანდარტის არაუმეტეს ერთი კომპონენტის შეფასებით, როგორც „ნაწილობრივ შესაბამისობაშია სტანდარტის მოთხოვნებთან", საბჭო იღებს გადაწყვეტილებას აკრედიტაციის შესახებ და მიმართავს ცენტრს შუამდგომლობით ამ დებულებით დადგენილი წესით დაწესებულებაში მონიტორინგის განხორციელების შესახებ (არაუმეტეს 2 წლის ვადაში), რაც აისახება საბჭოს სხდომის ოქმში;

**2. აღწერილობითი ნაწილი და დასაბუთება**

2.1. სსიპ - განათლების ხარისხის განვითარების ეროვნულ ცენტრში (შემდგომში - ცენტრი) 2023 წლის 15 ივნისის №02,01/675 წერილით (ცენტრში რეგისტრაციის - №739785, 21/06/2023) წარმოდგენილია მხითარ ჰერაცის სახელობის ერევნის სახელმწიფო სამედიცინო უნივერსიტეტის სააკრედიტაციო განაცხადი "ზოგადი მედიცინის" სომხურენოვან ერთსაფეხურიან საგანმანათლებლო პროგრამაზე. ცენტრის 2023 წლის 26 ივნისის №761959 წერილით, დაწესებულებას დაუდგინდა ხარვეზი. 2023 წლის 10 ივლისის №857929 და №858101 წერილებით ცენტრში შემოვიდა ხარვეზის გამოსწორების კორესპონდენცია.

2.2. ცენტრის 2023 წლის 31 ივლისის №949550 ბრძანების საფუძველზე, მხითარ ჰერაცის სახელობის ერევნის სახელმწიფო სამედიცინო უნივერსიტეტი ცნობილ იქნა აკრედიტაციის მაძიებლად. ცენტრის 2023 წლის 02 ოქტომბრის №1273715 ბრძანების საფუძველზე შეიქმნა ექსპერტთა ჯგუფი, რომელმაც დაწესებულებაში ვიზიტი "ზოგადი მედიცინის" სომხურ, ინგლისურ და რუსულენოვან ერთსაფეხურიან საგანმანათლებლო პროგრამების შეფასების მიზნით განახორციელა 2023 წლის 16-20 ოქტომბერს.

ექსპერტთა ჯგუფის მიერ წარმოდგენილი დასკვნის შესაბამისად, სააკრედიტაციოდ წარმოდგენილი "ზოგადი მედიცინის" სომხურენოვანი ერთსაფეხურიანი საგანმანათლებლო პროგრამა შეფასდა შემდეგნაირად:

| სტანდარტები | შესაბამისობაშია მოთხოვნებთან | მეტწილად შესაბამისობაშია მოთხოვნებთან | ნაწილობრივ შესაბამისობაშია მოთხოვნებთან | არ არის შესაბამისობაში მოთხოვნებთან |
|---|---|---|---|---|
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. საგანმანათლებლო პროგრამის მიზანი, სწავლის შედეგები და მათთან პროგრამის შესაბამისობა | | x | | |
| 2. სწავლების მეთოდოლოგია და ორგანიზება, პროგრამის ათვისების შეფასების ადეკვატურობა | | x | | |
| 3. სტუდენტთა მიღწევები, მათთან ინდივიდუალური მუშაობა | x | | | |
| 4. სწავლების რესურსებით უზრუნველყოფა | x | | | |
| 5. სწავლების ხარისხის განვითარების შესაძლებლობები | x | | | |

2.3. საბჭომ შეისწავლა საგანმანათლებლო პროგრამების აკრედიტაციასთან დაკავშირებული დოკუმენტაცია, კერძოდ, თვითშეფასების ანგარიშსა და მასზე თანდართულ დოკუმენტაციაში ასახული ინფორმაცია, ექსპერტთა ჯგუფის დასკვნა, ექსპერტთა ჯგუფის დასკვნის პროექტზე აკრედიტაციის მაძიებლის მიერ ცენტრისთვის წარმოდგენილი არგუმენტირებული პოზიცია. ზეპირი მოსმენა გაიმართა 2024 წლის 06 თებერვალს.
2.4 სააკრედიტაციო განაცხადის, აკრედიტაციის ექსპერტთა ჯგუფის დასკვნისა და ექსპერტთა ჯგუფის დასკვნის პროექტზე აკრედიტაციის მაძიებლის მიერ ცენტრისთვის წარმოდგენილი არგუმენტირებული პოზიციის, ასევე, სხდომაზე დაინტერესებული მხარის ზეპირი პოზიციის მოსმენის საფუძველზე, საბჭომ სრულად გაიზიარა ექსპერტთა დასკვნაში დაფიქსირებული შეფასება,

**3. სარეზოლუციო ნაწილი**

„უმაღლესი განათლების შესახებ“ საქართველოს კანონის 66-ე მუხლის პირველი პუნქტის, მე-2 პუნქტის “ა” ქვეპუნქტისა, მე-3 და მე-4 პუნქტების, „განათლების ხარისხის განვითარების შესახებ“ საქართველოს კანონის 22-ე მუხლის პირველი პუნქტის, მე-2 პუნქტის „ა“ ქვეპუნქტის, მე-3 და მე-8 პუნქტების, აკრედიტაციის დებულების $31^2$ მუხლის პირველი პუნქტის, $27^2$ მუხლის პირველი პუნქტის, $27^5$ მუხლის პირველი პუნქტის „ა“ ქვეპუნქტის, მე-2 და მე-5 პუნქტების, $27^6$ მუხლის პირველი პუნქტის „$გ^1$“ ქვეპუნქტის, „საჯარო სამართლის იურიდიული პირის - განათლების ხარისხის განვითარების ეროვნული ცენტრის საქმისწარმოების წესისა და შინაგანაწესის დამტკიცების შესახებ” სსიპ განათლების ხარისხის განვითარების ეროვნული

ცენტრის დირექტორის 2011 წლის 01 ივნისის №223 ბრძანების მე-8 მუხლისა და საქართველოს ზოგადი ადმინისტრაციული კოდექსის 53-ე მუხლის შესაბამისად, აკრედიტაციის საბჭომ 31 ხმით არცერთის წინააღმდეგ

**გადაწყვიტა:**

1. დაკმაყოფილდეს მხითარ ჰერაცის სახელობის ერევნის სახელმწიფო სამედიცინო უნივერსიტეტის მიერ წარმოდგენილი სააკრედიტაციო განაცხადი და დანართი №1-ით გათვალისწინებულ "ზოგადი მედიცინის" სომხურენოვან ერთსაფეხურიან საგანმანათლებლო პროგრამას მიენიჭოს აკრედიტაცია 7 წლის ვადით, 2 წლის ვადაში მონიტორინგის განხორციელების პირობით;
2. ცნობილ იქნას აკრედიტაციის ექსპერტთა ჯგუფის დასკვნა "ზოგადი მედიცინის" სომხურენოვანი ერთსაფეხურიანი საგანმანათლებლო პროგრამის შესახებ ამ გადაწყვეტილების განუყოფელ ნაწილად (დანართი №2).
3. ცნობილ იქნას საბჭოს 2024 წლის 14 თებერვლის №160329 სხდომის ოქმის № 01 ნაწილი ამ გადაწყვეტილების განუყოფელ ნაწილად (დანართი №3).
4. დაწესებულებას საბჭომ შესასრულებლად განუსაზღვრა შემდეგი რეკომენდაციები და რჩევები:

**რეკომენდაციები:**

1. რეკომენდებულია, პროგრამის მიზნები იყოს საჯაროდ ხელმისაწვდომი, მაგალითად დაწესებულების ვებგვერდის ან სხვა პლატფორმების მეშვეობით, რათა გააუმჯობესოთ გამჭვირვალობა და დაინტერესებულ მხარეთა ჩართულობა.
2. რეკომენდებულია, კლინიკურ გარემოში, პრაქტიკული უნარების შეფასების კრიტერიუმები უკეთ კონტროლდებოდეს და უკეთ იყოს აღწერილი, რადგან უნარების შეფასების წილი (ზოგადად კლინიკურ კურსებში) დაბალია.
3. უზრუნველყოფილი უნდა იყოს პროგრამის ცალკეულ ფაზას შორის (მაგალითად, პრეკლინიკურ და კლინიკურ ნაწილებს შორის) კავშირის მონიტორინგი, რათა ხელი შეეწყოს სწავლებისა და სწავლის შეუფერხებელ პროცესს და უზრუნველყოფილი იყოს ჰარმონია გეგმებსა და რეალობას შორის.
4. უნდა გადაიხედოს და შეიცვალოს პროგრამის მოდულური სტრუქტურა, განვითარდეს ინტეგრაციის დონეები (ჰორიზონტალური, ვერტიკალური და სპირალური კომპონენტები), ყოვლისმომცველი, შეთანხმებული საგანმანათლებლო სტრატეგიის საფუძველზე.
5. უნდა გადაიხედოს მოდულების სტრუქტურა (საგნების ბმა, თემებსა და საკითხებს შორის კავშირი, წინაპირობები).
6. უნივერსიტეტმა უნდა შეიმუშაოს სამოქმედო გეგმა, რომელშიც დეტალურად იქნება აღწერილი აქტივობები, პასუხისმგებლობები, ვადები და მოსალოდნელი ცვლილებების ხასიათი.
7. უნდა გადაიხედოს და განვითარდეს სასწავლო გეგმის რუკა და სასწავლო გეგმის ჰორიზონტალურ, ვერტიკალურ და სპირალურ ელემენტებს შორის კავშირები.
8. რეკომენდებულია სავალდებულო და არჩევითი საგნების დაბალანსებული განაწილება ყოველი სასწავლო წლის/სემესტრის განმავლობაში. ასევე რეკომენდებულია 20-ზე მეტი არჩევითი კურსის შეთავაზება, როგორც ეს მითითებულია YSMU-ის დიპლომირებული მედიკოსის საგანმანათლებლო პროგრამაში.
9. რეკომენდებულია გადაიხედოს პროგრამა და ნათლად განისაზღვროს და გაიწეროს სასწავლო გეგმაში უნარების/კვლევითი კომპეტენციების ჩამონათვალი.
10. რეკომენდებულია, უნივერსიტეტმა შეიმუშაოს და დანერგოს უფრო დეტალური კრიტერიუმები და რუბრიკები ქულების მინიჭებისთვის.

**რჩევები:**

1. რეგულარულმა სემინარებმა ან უკუკავშირის სესიებმა სასურველია უზრუნველყონ, რომ ყველა დაინტერესებული მხარე, ფაკულტეტიდან დაწყებული სტუდენტების ჩათვლით, შესაბამისობაში იყოს პროგრამის მიზნებთან.
2. სამედიცინო სფეროს დინამიური ხასიათის გათვალისწინებით, სასურველია, პერიოდულად განიხილოს და განახლდეს პროგრამის მიზნები მათი მუდმივი აქტუალობის უზრუნველსაყოფად.
3. სასურველია, რომ პროგრამის შემუშავებაში ჩართული ყველა დამსაქმებელი სრულად იცნობდეს პროგრამის სწავლის შედეგებს.
4. სასურველია, გადაიხედოს განმავითარებელი შეფასების განრიგი და გადაიხედოს, სხვა ტერმინი უფრო ზუსტ აღწერას ხომ არ უზრუნველყოფდა.
5. სასურველია, გადაიხედოს დაწესებულების მიერ დადგენილ მონაცემთა დაცვის პოლიტიკა, რათა უზრუნველყოფილი იყოს პერსონალურ მონაცემთა დაცვის საკითხები.
6. სასურველია, წაახალისდეს თანამშრომლობა სხვადასხვა პრეკლინიკური დეპარტამენტსა და კლინიკური დისციპლინების ფაკულტეტებს შორის, რათა ერთად იმუშაონ ისეთი სტრუქტურის შესაქმნელად, რომელიც მოიცავს პრეკლინიკური კურსების ელემენტებს და კლინიკური მედიცინის საგნებს.
7. პროგრამის სტრუქტურა სასურველია გახდეს უფრო გასაგები და ადვილად შესასრულებელი, თუკი ის წარმოდგენილი იქნება ისეთი დიაგრამით (ორგანოგრამა), რომელიც აჩვენებს ადმინისტრაციულ, აკადემიურ და კლინიკურ ერთეულებს, განყოფილებებს, დანაყოფებს, აფილირებულ სასწავლო საავადმყოფოებს. ამის ჩვენება შესაძლებელია უსდ-ს ვებგვერდზეც.
8. ზოგიერთ შემთხვევაში, კურსების ინგლისური სახელები ნაკლებად გასაგებია, მაგალითად - კერძო ქირურგია (Private Surgery) შეიძლება იყოს "ზოგადი ქირურგია" (General Surgery) და ტოპოგრაფიული ანატომია და ოპერაციული ქირურგია (Topographical Anatomy and Operative Surgery) შეიძლება იყოს "ქირურგიული ანატომია და ტექნიკა" ("Surgical Anatomy and Techniques").
9. სასურველია, დაიხვეწოს მოდულის განმარტება.
10. სასურველია, გადაიხედოს აკადემიური საათების განაწილება.
11. სასურველია სწავლების თანამედროვე მეთოდების უფრო ფართო გამოყენება; წაახალისეთ აქტიური სწავლების ტექნიკები, როგორიცაა პრობლემის გადაჭრა, შემთხვევებზე დაფუძნებული სწავლება და ჯგუფური პროექტები.
12. ელექტრონული სწავლების მიდგომები შეიძლება უფრო ფართოდ იქნას გამოყენებული დიდაქტიკური კონცეფციის გასაუმჯობესებლად.
13. სასურველია, გაძლიერდეს სასწავლო გეგმაზე დაფუძნებული კვლევითი სამუშაოები სტუდენტებისათვის, მაგ. არჩევითი კურსები მათთვის, ვინც მონაწილეობს სტუდენტურ სამეცნიერო წრეებში დეპარტამენტებში/კლინიკებში.
14. სასურველია მრავალკომპონენტიანი შეფასების სისტემის დანერგვა ყველა საგნისთვის.
15. სასურველია, გაგრძელდეს ERASMUS+-ის პროგრამისკენ სწრაფვა და ჩამოაყალიბეთ ორმხრივი პარტნიორობა სხვადასხვა უნივერსიტეტთან, რათა გაზარდოთ შესაძლებლობების დიაპაზონი იმ სტუდენტებისთვის, რომლებსაც სურთ მონაწილეობა მიიღონ საერთაშორისო პროგრამებში.
16. სწავლების მხრივ არსებულ სამუშაო დატვირთვასთან ერთად, სასურველია დაინერგოს სამეცნიერო და სხვა აქტივობების წლიური ნორმებიც.

17. სასურველია, გაიზარდოს რესურსები საბაზისო საგნების დეპარტამენტებისა და სიმულაციური ცენტრის/OSCE გამოცდისთვის.
18. სასურველია, მეტად გაუმჯობესდეს დაინტერესებულ მხარეთა ინფორმირებულობა და ინვესტიცია ჩადეთ ისეთ ინიციატივებში, რომლებიც მიზნად ისახავს ყველა დაინტერესებული მხარის ჩართულობასა და ინფორმირებულობას, განსაკუთრებით გარე დაინტერესებული მხარეების, როგორებიც არიან დამსაქმებლები.
19. სასურველია შეფასების შედეგების გამარტივება, რაციონალიზაცია და პრიორიტეტად ქცევა, შეფასების მიგნებების კონსოლიდირებისთვის სტრატეგიების შემუშავების გზით და მათი სტრატეგიული გავლენის პოტენციალის საფუძველზე, პრიორიტეტულობის მინიჭებით.
20. სასურველია, დაწესებულებამ შეისწავლოს ტექნოლოგიური მიღწევების გამოყენების შესაძლებლობები შეფასების პროცესების ოპტიმიზაციაში. ეს შეიძლება მოიცავდეს მოწინავე ანალიტიკური ინსტრუმენტების გამოყენებას შეფასების მიგნებების ანალიზის გასაუმჯობესებლად.
21. მიუხედავად იმისა, რომ პროგრამის შეფასების პროცესში უკვე მონაწილეობს მრავალი დაინტერესებული მხარე, სასურველია მეტი სტრუქტურირებული ფორუმების და პროექტების განხორციელება, სადაც აღნიშნული დაინტერესებული მხარეები წარმოადგენენ თავიანთ უკუკავშირს. აღნიშნულის მხარდასაჭერად რეგულარულ რეჟიმში უნდა იყოს ორგანიზებული განხილვები მრგვალ მაგიდასთან და სამუშაო შეხვედრები.

5. საბჭოს აღნიშნული გადაწყვეტილება ძალაში შევიდეს 2024 წლის 14 თებერვალს.
6. მონიტორინგის განხორციელების ვადად განისაზღვროს 2 წელი - 2026 წლის 14 თებერვალი.
7. საბჭოს მიერ მიღებული გადაწყვეტილება, საქართველოს ზოგადი ადმინისტრაციული კოდექსის 180-ე მუხლის პირველი ნაწილისა და „განათლების ხარისხის განვითარების შესახებ" საქართველოს კანონის $24^1$ მუხლის პირველი პუნქტის, აკრედიტაციის დებულების $31^2$ მუხლის მე-13 პუნქტის შესაბამისად, საგანმანათლებლო დაწესებულების მიერ შეიძლება გასაჩივრდეს სააპელაციო საჩივრის სააპელაციო საბჭოში წარდგენის გზით შემდეგ მისამართზე: ქ. თბილისი, მ. ალექსიძის მე-2 შესახვევი №2, ან თბილისის საქალაქო სასამართლოს ადმინისტრაციულ საქმეთა კოლეგიაში სარჩელის შეტანის გზით შემდეგ მისამართზე: ქ. თბილისი, დავით აღმაშენებლის ხეივანი N64, აღნიშნული გადაწყვეტილებისა და მისი დასაბუთებითი ნაწილების (დანართი №1, დანართი №2, დანართი №3) ცენტრის ვებ-გვერდზე (www.eqe.ge) გამოქვეყნების დღიდან, ერთი თვის ვადაში.

უმაღლესი საგანმანათლებლო პროგრამების
აკრედიტაციის საბჭო
საბჭოს მდივანი
რატიანი რატი

საგანმანათლებლო პროგრამების აკრედიტაციის
საბჭო
საბჭოს თავმჯდომარე
ბუჩაშვილი გოდერძი

დანართი №1

| № | ინფორმაცია საგანმანათლებლო პროგრამის შესახებ | |
|---|---|---|
| 1 | საგანმანათლებლო პროგრამის დასახელება | ზოგადი მედიცინა / General Medicine |
| 2 | ერთობლივი უმაღლესი საგანმანათლებლო პროგრამა | - |
| 3 | სტატუსი | ინსტიტუციური აკრედიტაცია |
| 4 | სტატუსის გათვალისწინებით, საბჭო(ებ)ს გადაწყვეტილების თარიღი და ნომერი | N36, 24.12.2020 |
| 5 | ხელახალი აკრედიტაციის შემთხვევაში საგანმანათლებლო პროგრამის წინა დასახელება | |
| 6 | უმაღლესი განათლების საფეხური | მეორე საფეხური, ერთსაფეხურიანი |
| 7 | დაშვების წინაპირობები | - |
| 8 | კვალიფიკაციის დონე | მე-7 |
| 9 | კვალიფიკაციის დასახელება | "დიპლომირებული მედიკოსი ექიმი"(MD Physician, სომხეთის რესპუბლიკა) - დიპლომირებული მედიკოსი (Medical Doctor, საქართველო) |
| 10 | ზოგადი განათლების შესაბამისი საფეხურის საგნის/საგნების/საგნობრივი ჯგუფის სწავლების უფლების მითითებით | - |
| 11 | დეტალური სფეროს დასახელება და კოდი (ISCED – F – 2013) | მედიცინა 0912 |
| 12 | სწავლების ენა | სომხური |
| 13 | ECTS კრედიტების ჯამური რაოდენობა | 360 |
| 14 | განხორციელების ადგილი | ერევანი, კორიუნის 2, RA 0025 |
| 15 | მსჯავრდებულ აბიტურიენტთა საგანმანათლებლო პროგრამაზე სწავლა-სწავლების უფლებამოსილება | - |
| 16 | გადაწყვეტილების ძალაში შესვლის თარიღი | 2024 წლის 14 თებერვალი |
| 17 | აკრედიტაციის საბჭოს მიერ გაცემული რეკომენდაციების შესრულების თაობაზე ანგარიშის წარმოსადგენად/მონიტორინგის განსახორციელებლად განსაზღვრული ვადა | 2026 წლის 14 თებერვალი |
| 18 | აკრედიტაციის ვადის გასვლის თარიღი | 2031 წლის 14 თებერვალი |